

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության նպատակների և խնդիրների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է և հիմք է հանդիսանում ռազմական կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմնական ուղղությունների ու գերակայությունների մշակման և իրագործման համար:

2. Հայեցակարգը, հիմնվելով ազգային կրթական փորձի և ռազմական կրթության ոլորտում առկա միջազգային զարգացումների վրա, նախանշում է ռազմական կրթության գործող համակարգի բարեփոխումների ուղղությունները, մասնավորապես՝ ռազմական կրթության շարունակականությունը, եռաստիճան կրթական համակարգի ներդրումը, փոխհամագործակցությունը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստումը, վերապատրաստումը, որակավորումը, ռազմական կրթության համակարգում ենթասպայական կազմի կրթության ներառումը, ինչպես նաև նախազորակոչային պատրաստության դիտումը՝ որպես սպայական պատրաստության փուլ:

3. Հայեցակարգի իրավական հիմքն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները և այլ իրավական ակտերը:

II. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Հայեցակարգի նպատակն է ապահովել միջազգային առաջատար չափանիշներին համապատասխանող և սեփական հարաճուն պահանջները բավարարող Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության համակարգի

շարունակական զարգացումը, ինչպես նաև հստակեցնել դրա տեղն ու դերը Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում:

5. Հայեցակարգի խնդիրներն են՝

1) ռազմական կրթության համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչների պահանջներին,

2) ռազմական կրթության համակարգի զարգացման և կատարելագործման ուղիների նախանշումը,

3) պաշտոնեական առաջխաղացման ուղեգծի նախանշումը,

4) ռազմական կրթության փուլերի շարունակականության և ներդաշնակության ապահովումը,

5) ռազմակրթական գործընթացի կառավարման և ռազմական կրթության զարգացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորման նախանշումը:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6. Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության համակարգը ռազմական, կրթական, գիտական, վերապատրաստման հաստատությունների, կրթության կառավարման մարմինների, կրթական չափորոշիչների ու ծրագրերի, ինչպես նաև կրթական համապատասխան միջավայրի և կիրարկվող կրթական տեխնոլոգիաների ամբողջություն է:

7. Ռազմական կրթության համակարգն ապահովում է զինված ուժերի կիրառման, պլանավորման, կազմակերպման և կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների փոխանցումը, համապատասխան հմտությունների և կարողությունների ձևավորումը:

8. Հայաստանի Հանրապետության ռազմական կրթության համակարգը՝ որպես կրթության համակարգի բաղկացուցիչ մաս, ապահովում է շարունակական կրթության իրականացման համար անհրաժեշտ կրթական միջազգային համագործակցություն՝ լայնորեն կիրառելով ժամանակակից նորարական կրթական և

տեղեկատվական տեխնոլոգիաները, ինչպես նաև հեռավար կրթության հնարավորությունները:

9. Ռազմական կրթություն իրականացնող հաստատություններ են համարվում՝

- 1) ենթասպայական կազմի պատրաստման ռազմաուսումնական կենտրոնները,
- 2) բարձրագույն ռազմամասնագիտական ուսումնական հաստատությունները,
- 3) բարձրագույն ռազմական և հետբուհական կրթություն իրականացնող

ուսումնական հաստատությունները:

IV. ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ

10. Սպայական կազմի պատրաստության փուլերն են՝

- 1) նախազորակոչային պատրաստության փուլը,
- 2) կրտսեր սպայական կազմի կրթության փուլը,
- 3) ավագ սպայական կազմի կրթության փուլը,
- 4) բարձրագույն սպայական կազմի կրթության փուլը:

11. Նախազորակոչային պատրաստության փուլում իրականացվում է հանրակրթական դպրոցներում, այդ թվում՝ զինվորական պատրաստության լրացուցիչ կրթական ծրագրերով մասնագիտացված հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների կողմից զինվորական գործի նկատմամբ հետաքրքրության ձևավորումը, ինչպես նաև նախնական զինվորական պատրաստության հիմունքների, գիտելիքների և հմտությունների ձեռք բերումը:

12. Կրտսեր սպայական կազմի կրթության փուլում ապահովվում է մարտավարական մակարդակում ռազմական գիտելիքներին և հմտություններին տիրապետող, առաջատարի ու հրամանատարի ունակություններով օժտված սպայական կազմի պատրաստումը՝ ներառյալ քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտներ հանդիսացող սպայի թեկնածուների ուսուցումը, ինչպես նաև կրտսեր սպայակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացումը:

13. Ավագ սպայական կազմի կրթության փուլում ապահովվում է օպերատիվ-մարտավարական գործողությունների կառավարմանը և շտաբային

աշխատանքներին տիրապետող բարձրագույն ուղղման կրթությամբ սպաների պատրաստումն ու վերապատրաստումը:

14. Բարձրագույն սպայական կազմի կրթության փուլում ապահովվում է զինվորական կամ պետական այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կրթությունն ու վերապատրաստումը:

15. Սպայական կազմի պատրաստության փուլերն ընթանում են սույն որոշման Հավելված 2-ով հաստատված ճանապարհային քարտեզին համապատասխան:

V. ԵՆԹԱՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

16. Ենթասպայական կազմի կրթությունը նպատակաուղղված է առաջատարի ունակություններով օժտված սերժանտների, ավագների և ենթասպաների պատրաստմանը, ծառայողական առաջխաղացմանը, ինչպես նաև նրանց՝ բարձրագույն կրթություն ստանալու դեպքում սպայական կազմ փոխադրվելու հնարավորության ապահովմանը:

VI. ՌԻՍՈՒՑՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

17. Ռազմական կրթության բնագավառում ուսուցում, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող անձնակազմի պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումն իրականացվում է բարձրագույն ուղղման և քաղաքացիական ուսումնական և հետբուհական հաստատություններում:

VII. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՌԱԶՄԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

18. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուղղման և քաղաքացիական ուսումնական հաստատությունների համագործակցությունն

իրականացվում է ռազմակրթական եռաստիճան համակարգի ներդրման, գիտատեխնիկական նախագծերի մշակման, համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, գիտամանկավարժական կադրերի պատրաստման ու վերապատրաստման նպատակով:

19. Հայաստանի Հանրապետության ռազմական և օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների համագործակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստման, օտարերկրյա պետության գիտակրթական ներուժի օգտագործման, ինչպես նաև դաշնակից և գործընկեր պետությունների զինված ուժերի հետ փոխգործունակության ապահովման նպատակով:

VIII. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20. Հայեցակարգի նպատակի և խնդիրների իրականացման համար ընդունվում են ռազմական կրթությանն առնչվող պլանավորման փաստաթղթեր, սահմանվում են կրթական չափորոշիչներ, վերանայվում է ռազմական կրթության կառավարման քաղաքականությունը, մշակվում են ուղեցույցներ, ընդունվում են իրավական ակտեր:

21. Հայաստանի Հանրապետության պաշտպանական ներուժի կադրային և մասնագիտական բաղադրիչի համախմբման ու զարգացման միջոցով Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային խնդիրների արդյունավետ լուծման նպատակով՝ նախատեսվում է կազմակերպել միջգերատեսչական ձևաչափով պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթություն: